



Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ*

Վեհափա՛ն Տեր, սրբազա՛ն եղբայրներ,

Այս սրբագոյնար և պատկառելի ժողովի օրակարգում դրված հարցը Ավետարանի պատգամների լույսի տակ՝ մեր եկեղեցու դիրքի և վերաբերմունքի քննարկումն է արդիականության այնպիսի կարևոր հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ խաղաղության, ազգային և ընկերային արդարության, ժողովուրդների եղբայրության և եկեղեցիների համագործակցության հարցերը:

Այսօր քրիստոնեական ընդհանուր եկեղեցու առաջ դրված են հոգևոր, բարոյական, դաստիարակչական և ընկերային, հասարակական ու տնտեսական բազում հարցեր, որոնց հանդեպ եկեղեցին պետք է կարողանա ճշտել իր վերաբերմունքը, առնչվել մարդկության առաջ դրված կարևորագույն խնդիրներին, մասնակցել դրանց լուծմանը այն չափով և այն ծավալով, որ եկեղեցին կարողանա մեր օրերում էլ կատարել իր հոգևոր առաքելությունը և իրական դիպլոմի մեջ լինել աշխարհի հետ, ապրել և գործել մարդկության ծոցում, աշխարհի հետ և աշխարհի մեջ:

Այսօր աշխարհը, մեր օրերի մարդկությունը ապրում են ոգեկան տագնապի, բարոյական անհավասարակշռության, ընկերային խոր հակասությունների մի ժամանակաշրջան:

Մարդկությանը դեռևս պակասում է հոգեկան ապահով կուլան, առաջնորդող լույս և ներքին անդորրություն: Եկեղեցին ինքն էլ, ժողովուրդների կրոնական մտածողությունը և կյանքը ևս ապրում են տագնապի ու որոնումների մի ժամանակաշրջան:

Այս հանգամանքների մեջ ավելի քան անհրաժեշտ է դառնում Քրիստոսի սուրբ Ավետարանի քարոզությունը, որպես թե՛ նա գրված լինել մանավանդ մեր օրերի համար, մեր ժամանակի մարդկանց համար, որպես խաղաղության, արդարության և սիրո աստվածային պատգամ: Մենք հավատում ենք, որ հավիտենական են Ավետարանի ճշմարտությունները, և Ավետարանը համագումարն է և կենդանի աղբյուրը ոգեկան մեծ ճշմարտությունների,

* Սույն գեկուցագիրը կարդացվել է եպիսկոպոսաց ժողովի Զ նիստում, սեպտեմբերի 30-ին:

որոնց պետք է վերադառնա մեր օրերի երկյուղի և տագնապի մեջ տառ-ապող մարդը՝ գտնելու համար իր բարոյական հավասարակշռությունը, իր կյանքի իմաստը, իր միախառնությունը և իր փրկությունը:

Ընկերային արդարություն, եղբայրական անշահախնդիր օգնություն բոլոր ճնշվածներին և շահագործվողներին, անասկարկ օժանդակություն բոլոր անժառանգներին, ազատություն և արդարություն բոլոր ազգերին, եղբայրություն ժողովուրդներին և խաղաղության պաշտպանություն ողջ աշխարհում,— ահա հրամայական հարցեր, որոնք արդարորեն հուզում են ողջ քրիստոնեական աշխարհը, ընդհանրական եկեղեցուն:

Արբազա՛ն եղբայրներ, այս բոլոր հարցերը հուզում են այսօր նաև մեզ, որպես հայ եկեղեցու սպասավորների, եթե կամենում ենք հեռու չմնալ կյանքից և աշխարհից: Մենք հավատում ենք, որ հայ եկեղեցին կմնա կենդանի, կենսունակ ու կգործի տևականորեն իր առաքելության և կոչման բարձրության վրա, եթե համարձակ կերպով իր խոսքը և գործը միացնի այս ոգևորյալ, բարոյական, ընկերային հրամայականների հաղթանակի համար:

Մեզ համար, այս արբազումար ժողովի համար, հարցերի հարցն ենք համարում խաղաղության պաշտպանության հարցը:

Խաղաղությունը Աստուծո կամքն է և պատգամը: Աստուծո ուխտը աշխարհի և մարդկության հետ, կյանքի և խաղաղության ուխտ է. «Ուխտ իմ որ ընդ մնա կենաց և խաղաղութեան» (Մաղաքիա Բ 5):

Իզուր չէ, որ անցյալ տարի համաշխարհային չափանիշով նշվեց մարդու իրավունքների (Human Rights) պաշտպանության քսանամյակը, քրիստոնեական ճշմարտության լույսի տակ: Դա մի այնպիսի իրադարձություն էր, որը ոչ ոք պետք չէ մոռանա, ոչ ոք պետք չէ անտեսի, որովհետև այն մերից բոլորին հրավիրում է ճանաչելու երկրի վրա յուրաքանչյուր մարդու սպրեկու և ազատ գործելու իրավունքը. որովհետև մարդու իրավունքի ճանաչումը ուղիղ ճանապարհ է դեպի խաղաղություն:

Խաղաղության և իրավունքի հասկացությունները փոխադարձաբար պատճառ են և արդյունք. խաղաղությունը նպաստում է իրավունքին և, իր հերթին, իրավունքը հիմքն է խաղաղության: Առանց արդարության՝ մարդկային անհատի և հավաքականությունների համար կարելի չէ ապահովել խաղաղ գոյավիճակ:

Խաղաղությունը օրգանապես և անհրաժեշտորեն կապված է մարդկանց և ժողովուրդների արդար իղձերի և մարդկային իրավունքների կենսագործման հետ, մարդկանց և ժողովուրդների մեջ ներդաշնակ, արդար փոխհարաբերությունների գոյավիճակի հետ: Այս ոգով է, որ սաղմոսերգուն պատգամում է. «Արդարութիւն և խաղաղութիւն համբուրեացին» (Սաղմ. 2Դ 11):

Նույն մտածումի լույսի տակ Ամենայն Հայոց Հայրապետը 1961 թ. հունիսի 14-ին Պրագայում, խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային համաժողովում, Իր ելույթի մեջ նշում էր. «Խաղաղությունը կյանքի առողջ և շինարար ուժերի, ժամանակների հողովույթով հետզհետե վերանորոգվող և զարգացող ուժերի ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության բարոյական օրենքի լույսի տակ»:

«...Մեր օրերի գիտության մեծագույն նվաճումները, երբ մարդու իմացական հանճարը թռիչք է առել հետազոտելու և նվաճելու նյութական տիեզերքը ամբողջ՝ մինչև արև՝ աղբյուրը լույսին, ինչքան հրաշալի պիտի լիներ տեսնել ու հաստատել հաղթանակը նույն մարդու բարոյական հանճարի, նվաճումը խաղաղության և արդարության լույսի, որը դարեր առաջ ծագեց հավատքի

և հույսի բարձունքներից, աշխարհին բերելով աստվածային պատգամը. «Յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճություն»:

Արդարև, պայքարը հանուն խաղաղության և մարդկային իրավունքի, սրբազան պարտքն է Աստուծո պատկերով ստեղծված ամեն անհատի:

Պետք է հարգվի և երաշխավորվի ամեն մարդու նկատմամբ խաղաղության և արդարության սկզբունքը:

Ոչ մեկ մարդ պետք չէ լինի անարդարության պատճառ մի ուրիշի համար, նրա կյանքի, հավատի, աշխատանքի, կրթության և ազատ զարգացման համար:

Ժամանակն է, որ հաստատվեն հավասարակշռության և ներդաշնակության վիճակն ու օրենքը ամեն մարդու, բոլոր ժողովուրդների միջև, որպեսզի հետապնդելով երբեք և երբեք իրավունքն ու արդարությունը բռնությամբ չտուճահարվեն, որպեսզի խաղաղությունը մնա տևական վիճակ և գործունեության սկզբունք բոլորի համար, կյանքի բոլոր ձևերի մեջ:

Պայքարը հանուն խաղաղության և մարդու իրավունքի, պայքար է ավելի՛ կատարյալ, ավելի՛ արդար, ավելի՛ ներդաշնակ կյանքի ձևերի համար: Խաղաղության երազանքը և պայքարը հանուն խաղաղության և մարդկային իրավունքի պաշտպանության հառաջդիմության, քաղաքակրթության ուղյակն է:

Ոչ թե բիրտ ուժը, այլ բանականությունն է, որ պետք է որոշի արդի աշխարհի և ժողովուրդների ճակատագիրը: Խաղաղությունը անկողոպտելի պարտականությունն է նրանց, այդ թվում և եկեղեցիների, ովքեր պատասխանատու են ժողովուրդների ճակատագրի և ապագայի համար, որովհետև խաղաղությունը բոլորինն է. «Զխաղաղություն թողում ձեզ, զխաղաղություն զիմ տամ ձեզ» (Հովհ. ԺԲ 27):

Սակայն խաղաղությունը ուժի և բռնության երկյուղը չէ, այլ մարդկային կարիքներին ընդառաջելու, թույլնրին, խեղճերին, բոլոր տառապյալներին և ստորացվածներին մարդկային արժանավորության հասցնելու մի ուժեղ մղում: Այս իմաստով էլ, Քրիստոսի խաղաղությունը, ավելի քան որևէ այլ մարդկայնական ուսմունք, իր մեջ ունի մարդու իրավունքների հարգման մտահոգությունը:

Եկեղեցու հիմնական առաքելությունն է և կոչումը լինել աշխարհի մեջ և աշխարհի հետ: Եկեղեցին չի կարող կղզիացած, փակ և անհաղորդ մնալ արդի աշխարհը հուզող շարժումներին, մարդկությունը խռովող հարցերին՝ գոհ և ինքնաբավ իր դարավոր գոյությամբ, իր ավանդապահ ոգով: Այս ձևով նա կդառնա անհոգի և կյանքից դատարկված մի հաստատություն:

Կար ժամանակ, երբ եկեղեցին մտահոգվում և զբաղվում էր առավելապես հավատացյալների համայնքով՝ կտրված ոչ քրիստոնյա հասարակության մնացած մասից: Այսօր եկեղեցու առաջադրանքն է աշխատել հասարակության բոլոր խավերի, բոլոր մարդկանց հետ, գործակցել բոլոր կրոնների, բոլոր գաղափարախոսությունների հետ՝ մարդկության հասարակաց շահը և երջանկությունը ապահովելու համար:

Ուրախալի է արձանագրել, որ եկեղեցիները այսօր համաշխարհային և ազգային գետնի վրա գիտակցել են ժամանակակից հարցերը և ստանձնել գործոն դեր աշխարհի գործերի մեջ: Եվ այդ պայման էլ պետք է լինի: Դրանով եկեղեցին կհանդիսանա կարևոր մի գործոն խաղաղության և համագործակցության համար, քալ կպահի կյանքի և աշխարհի հետ, կզգա ժամանակի

գարկերակը, կդառնա հաղորդ կյանքի տրոփյունների՝ դրանով իսկ ծառայելով իր բո՛լն կոչմանն ու առաքելությանը:

Ապրում ենք էկումենիզմի ժամանակաշրջանում: Եկեղեցին բացվել է դեպի աշխարհը. նա զգայուն և հաղորդ է դեպի մարդկային կարիքները: Եկեղեցին հասել է մարդկության զարգացման պատմության մի անկյունաքարին: Աստծուն ծառայելու հասկացողությունը բարեսիրական և եկեղեցական գործունեության սահմանների մեջ չի սահմանափակված միայն, այլ տարածվում է մարդու վրա՝ ամբողջությամբ վերցրած. այսինքն՝ մարդը հուզող հարցերի ամբողջության վրա:

Եկեղեցու առաջնահերթ պարտականությունն է այսօր նպաստել մի նոր աշխարհի կառուցմանը, որի մեջ տղամարդիկ, կանայք, երիտասարդությունը, առանց խտրության, ցեղի, գույնի, համոզմունքների, արդարության պայմաններում կարողանան գործադրել և ունենալ ապրելու իրավունք, խորապես մարդկային և արժանավայել մի կյանքով՝ ազատագրված ճնշումից և շահագործումից, մեղքից ու տգիտությունից, որոնց ենթարկում են նրանց իրենց նմանները, մի աշխարհ, որտեղ ազատությունը, խաղաղությունը և ապահովությունը գործնական, շոշափելի նշանակություն ունենան մարդկային հասարակության բոլոր անդամների համար, մի աշխարհ, որտեղ սպիտակներն ու ոչ սպիտակները կարողանան ապրել և միմյանց թույլատրեն ապրել՝ արժանավորության մեջ ազատորեն համագործակցելով ի խնդիր մարդկային մի նոր աշխարհի հաստատման:


Ամբողջ աշխարհն այսօր շարժման մեջ է: Տեղաշարժի մեջ է նաև եկեղեցին: Վերակենդանության մի նոր շունչ է թափանցել եկեղեցու առաքելության ու կոչման մեջ: Դա քրիստոնեական հավատքի վերակենդանության պայծառ վկայությունն է: Այդ պատճառով եկեղեցին այսօր չի կարող լուռ ու անտարբեր մնալ աշխարհի շատ մասերում կացության լարվածության առաջ, երբ ոտնահարվում են քրիստոնեական կրոնի մարդասիրական վեհ սկզբունքները և մարդկային տարրական իրավունքները: Չենք կարող լուռ մնալ առանց դատապարտելու պատերազմական գործողությունները, բռնությունները, թշվառությունն ու աղքատությունը, չմտահոգվել աղքատ երկրների ցավերով, տխուր ճակատագրով:

Պատերազմը ոճիր է Աստուծո դեմ, երկնքի դեմ, քաղաքակրթության դեմ, մարդկային վեհ և ազնիվ իդեալների, երազանքների դեմ:

Պատերազմը նշանակում է արարչագործության կատարելության կասեցում, մարդու վայրենացում, քաղաքակրթության անկում, մշակույթի արժեքավոր ստեղծագործությունների ոչնչացում, ավեր և կործանում:

Խաղաղությունը կյանք է, ստեղծագործություն, աղոթք ու աշխատանք, կառուցում ու երգ: Խաղաղության զգացումը, ծարավը բնածին է մարդուն. «Խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն» (Հովմ. Ը 6):

Մեր կրոնական և քառյակյան պարտքը, մեր մարդկային արժանապատվությունը և գիտակցությունը մեզ մղում են ջերմացնելու այդ բնածին զգացմունքը և այն արգելքների դեմ պայքարելու ձգտումը, որոնք կանգնած են ժողովուրդների ամենօրյա կյանքում, այդ զգացմունքների իրականացման ճանապարհին: Պետք չէ թույլ տալ, որ մարդկային քրտինքով ու աշխատանքով ստեղծված հազարամյա մշակույթի արժեքներ ոչնչանան ընդմիջտ, երբ դեռևս թարմ են մեր բոլորի հիշողության մեջ Ա և Բ համաշխարհային պատերազմների ավերներն ու սարսափները: Ազգերի և ժողովուրդների միջև պատերազմ և ստեղծություն հրահրողների թշնամության և բիրտ ուժի դեմ



պետք է հակադրենք մարդկային բանականության, ժողովուրդների եղբայրության, սիրո մասին սուրբ Հոգու կողմից սրբագործված մեր անասան հավատքը:

Մեր օրերին հանուն խաղաղության պաշտպանության ծավալված շարժումն ընդունել է ճշմարտապես համաշխարհային չափանիշներ և շատ երկրներում ստացել է համաժողովրդական գործի բնույթ:

Բայց քիչ է խաղաղության համար թափված աշխատանքը, քիչ է միայն խաղաղություն ցանկանալը, նույնիսկ աղոթելը խաղաղության համար: Ըստ Ավետարանի, խաղաղության պաշտպանությունն ու պայքարը ամուր կամքի տեր, հավատք և տեսիլք ունեցող մարդկանց գործն է: Խաղաղության համար պայքարողները Աստուծո նորիներ են կոչվում: Խաղաղությունը նվաճվում է համատեղ, կազմակերպված աշխատանքով, պայքարով, «**Բռունք լափըռտակեսցեն զնա**»: «Տե՛ր, Տե՛ր» ասողները չեն, որ մտնում են Աստուծո թագավորության մեջ, այլ նրանք, ովքեր Հոր կամքն են կատարում: Քրիստոսը երանի չի տալիս խաղաղության «բարեկամներին», այլ՝ խաղաղարարներին:

Եկեղեցին, աշխատելով, աղոթելով խաղաղության դատի պաշտպանության համար, մեծապես կնպաստի խաղաղության հաղթանակին, դրանով կբարձրանա նաև հոգևորականության հեղինակությունը և առավել կշեշտվի կրոնի անհրաժեշտությունը կյանքի համար նաև մե՛ր օրերին, արդի կյանքի պայմաններում:

Հայ եկեղեցին լրիվ հասկանում է ստեղծված կացության լրջությունը: Աշխարհի բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև մեր ժողովուրդը, այսօր խաղաղություն են պահանջում ու պատրաստ են իրենց սեփական կյանքով փակելու ընդմիջտ պատերազմների արյունոտ ճանապարհը և նվաճելու մնալուն խաղաղությունը:

Խաղաղության աստվածահաճո գործը իրենց սեփական ձեռքերի վրա են վերցրել ժողովուրդները, նրանց շարքում է կանգնել նաև հայ ժողովուրդը, որ իր անցյալի կենսատիրոջ հիման վրա, ակտիվ պայքար է մղում հանուն խաղաղության:

Անմահ է ժողովուրդը, և արդար է նրա սուրբ գործը:

Մեր եկեղեցու կամարների տակ միշտ հնչել են խաղաղության օրհներգերն ու պաշտպանները, և երկյուղածորեն ու սրբությամբ մեր պապերը աղոթել են «վասն խաղաղության ամենայն աշխարհի», որպեսզի «դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն յերկրի»:

Այս մտածմունքի լույսի տակ և այս ոգով հայ եկեղեցին, Մայր-Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, երջանկահիշատակ Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի օրից, ջերմորեն մասնակցել է 1952 թվից ի վեր հանուն խաղաղության կատարված միջազգային, միջեկեղեցական համաժողովներին և ասել իր խոսքը: Արդարև, շեշտում է հայրենասեր Հայրապետը Հայոց, հայ եկեղեցին իրավունք չունի լռելու, երբ մեր օրերին մի անգամ ևս մարդկության ապագա անվտանգությունը և խաղաղ կյանքի խոստումը ենթակա էին վտանգի և տեփական սպառնալիքների, և հոգեպես ուժասպառ մարդկությունը կանգնել էր նոր պատերազմների և նոր թշվառությանց առաջ:

Մխիթարական է արձանագրել, միաժամանակ, որ Ս. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի օրով և Նրա բերանից խաղաղության համաշխարհային համաժողովներում և՛ հայ եկեղեցու պատգամավորների, և՛ այլ պատվիրակությունների կողմից մի անգամ ևս դատապարտվում էր միջազգային հողի վրա 20-րդ դարի Ա. ցեղասպանությունը, 1915 թ. կատարված հայ

ազգի վրա, որը անպատիժ մնալով՝ գաղափարապես և գործնականորեն անապարհ բացեց հետագա նոր և ավելի վայրագ ցեղասպանությունների:

Խոսելով խաղաղության պաշտպանության հարցի մասին, այսօր ամենից առաջ մենք մտահոգվում ենք մեր եկեղեցու, մեր ժողովրդի, որ ի հայրենիս և ի ափյուռս աշխարհի, մանավանդ մեր վերածնված մայր հայրենիքի անվտանգության և ապագայի հարցերով:

Մեր եկեղեցին միշտ, իր պատմության ողջ ընթացքում, եղել է հարազատ թարգմանը մեր ժողովրդի հոգևոր ապրումների, ազգային իղձերի և երազանքների: Մեզ համար արդի աշխարհը այսօր նախ և առաջ մեր հավատացյալ ժողովուրդն է: Հայոց Հայրապետը 1968 թ. մայիսի 1-ին Նյու-Յորքում, ԱՄՆ-ի հայոց թեմի հոգևորականաց համագումարում, նշում էր. «Աշխարհի և մարդկության հետ մենք կառնչվինք մեր փոքր ածուի միջոցով: Մեր եկեղեցին հետևաբար դիպրոզի մեջ պիտի ըլլա նախ իր ժողովուրդին և այդ ճամփով նաև մարդկության հետ. անհերթելի պիտի ըլլար մեր մեջ խոսիլ աշխարհի հետ դիպրոզի մասին և անտեսել մեր սեփական ժողովուրդը, որուն ծոցին մեջ կոչված ենք գործելու: Մեզի հանձնված հոտը՝ հայ ժողովուրդը, այդ մեր աշխարհն է: Պարտինք լրջորեն որոշել մնալու այդ աշխարհին մեջ և անոր հետ... Այդ կնշանակե հարազատ ու սրտցավորեն ապրիլ մեր ժողովուրդի կյանքով...»:

Հայ եկեղեցին, աշխատելով և աղոթելով խաղաղության պաշտպանության համար, աշխատած կլինի մեր ժողովրդի միության, նրա գերագույն շահերի, նրա հայրենասիրական և ազգային իդեալների կենսագործման ու հայության պայծառ ապագայի համար՝ իր պատմական առաքելության, հոգևոր և հայրենասիրական կոչման ճանապարհով:

Մենք համոզված ենք, որ խաղաղությունը կհաղթի պատերազմին: Արդարությունը և իրավունքը կմնան խաղաղասեր, ազնիվ ժողովուրդների կողմը:

Մենք հավատում ենք, որ եկեղեցու առաքելությամբ և գործակցությամբ էթե ժողովուրդների և պետությունների մեջ արմատաճա Աստուծո հայրության և բոլոր մարդկանց եղբայրության գաղափարականը, ոչ ոք իր եղբոր դեմ սուր չի վերցնի, երկրի վրա կիրագործվի երկնքի արքայությունը, կիրականանան Եսայի մարգարեի բոցաշունչ խոսքերը. «Եւ ձուլեցեն զսուներս իւրեանց ի խոփս և զսոփնս իւրեանց ի մանգաղս, և ոչ առնուցու ազգ ազգի վերայ սուր և ոչ եւս ուսանին տալ պատերազմ»:

Մղված դեպի մեր ժողովուրդը և դեպի մեր եկեղեցին ունեցած մեր սըրբազան պարտքի և պատասխանատվության զգացմունքից, մենք կարծում ենք, որ հետայսու ևս մեր եկեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, կհետևի խաղաղության աստվածահաճո ճանապարհին, հանդես կգա արդի աշխարհում արդարության, իրավունքի և եղբայրության պաշտպանության դիրքերում և իր ջանքերը կմիացնի աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերին՝ ապահովելու համար կայուն և հավերժական խաղաղությունը երկրի վրա:

Մենք սրտագին կոչ ենք անում բոլոր պետություններին համատեղ ջանքերով որոնել զինաթափման ուղիները, բոլոր վիճելի հարցերը լուծել բանականության և փոխըմբռնման ճանապարհով և պատրաստակամություն ենք հայտնում այսուհետև ևս առավել մեծ մասնակցություն ունենալ այն բոլոր աշխատանքների մեջ, որոնց նպատակն է կայուն և արդարացի խաղաղության, ժողովուրդների միջև եղբայրության և եկեղեցիների միջև համագոր-

ծակցության վերջնական հաստատում՝ Աստուծո փառքի և մարդկության բարօրության ու երջանիկ ապագայի համար:

Սույն գեկուցումը կցանկանայինք ներառել 1969 թ. հուլիսի 4-ին Ջագորակում գումարված խաղաղության համաժողովում Ամենայն Հայոց Հայրապետի արտասանած փակման ճառի հետևյալ խորհմաստ խոսքերով. «Արդ, ջերմ եռանդով աղոթենք և Աստուծո ողորմությունը հայցենք, որպեսզի պահպանվի խաղաղ համակեցությունը աշխարհի վրա, բոլոր ժողովուրդներու միջև: Զբավարարվինք սակայն միայն աղոթքով: Աստված պետք է տեսնե որ մենք արժանի ենք Իր ողորմության: Մեր կենդանի գործով արդարացնենք զմեզ Աստուծո դատաստանին առջև: Զգանք և գիտակցինք թե մենք, եկեղեցիներու և կրոնական հաստատություններու ղեկավարներս, պատասխանատվության բաժին ունինք այսօրվան ստեղծված այս վտանգավոր կացության առջև, հետևաբար նույն չափով գոնե պարտականությունը ունինք մեր կենդանի գործով միջամտելու, կանգնեցնելու համար պատերազմի մեքենան ու վերացնելու համար բոլոր այն պատճառները, որոնք պատերազմներ կը ծնանին, որոնք անարդարություններ կստեղծեն, որոնք ժողովուրդներու միջև թշնամության և ատելության որոմը կցանեն»:

